«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ժողովուրդների բարեկամական, Վրաստան-Հայաստան միջպետական բարիդրացիական հարաբերություններեի շաղկապողն ու հուսալի կամուրջը: Միաժամանակ, ըստ իմ դիտարկումների, թերթը նշանակալի դեր է կատարում վրաց հասարակությունում Վաստանի ազգությամբ հայ քաղաքացիների լիարժեք ինտեգրման, վրաց պետականության կառուցման գործում: Եվ այդ առաքելության իրատեսությունը առանձնակի հստակեցվեց թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանի հասարակական-քաղաքական գործունեության արդյունքում:

Իսկ ինչ վերաբերում է զուտ անձնականին, ապա մեր «Ինտելեկտ» հրատարակչության եւ «Վրաստանի» համագործակցությունը սկսվեց նրանից հետո, երբ մենք ձեռնամուխ եղանք Վրաստանի հայկական դպրոցների համար դասագրքերի տպագրությանը: Եվ այդ գործում մեր հրատարակչությանը վիթխարի օգնություն ցուցաբեեցին «վրաստանցիները»: Հայկական դասագրքերի թարգմանությունները, խմբագրումը, սրբագրումը լրիվությամբ իրականացվում էր խմբագրության արհեստավարժ աշխատակիցների կողմից: Եվ նշանակալի է այն, որ տարիների ընթացքում այդ սերտ համագործակցության աղյունքում լույս տեսած դասագրքերը այսօր էլ կարելի է համարել էտալոնային:

Սիրելի «Վրաստան», կրկին անգամ շնոհավորում եմ պարբերականի 100-ամյա հոբելյանի առիթով, մաղթում երկարակեցություն, խստապահանջ ընթերցողների մեծ բանակ, իսկ խմբագության բոլոր աշխատակիցներին՝ երջանկություն, բարօրություն եւ ստեղծագործական հաջողություններ:

ԿԱԽՄԵԳ ԿՈՒԴԱՎԱ
«Ինտելեկտ» հրատարակչության հիմնադիր

ԸՆԹԱՑՔԴ՝ ԱՆԽԱԹԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Շարունակությանդ աջակցողներին, քեզ պահպանողներին նոր ուժ ու կորով եմ մաղթում՝ այսուհետ եւս ընթացքդ անխաթար պահելու:

Արհեստավարժ խմբագրակազմով սեւեռուն ուշադրությամբ հետեւում եւ քո էջերում անդրադառնում ես երկրում եւ աշխարհում տեղի ունեցող կարեւորագույն իրադարձություններին՝ ներառելով բոլոր ոլորտները. քաղաքականությունից մինչեւ մշակույթ, սոցիալականից մինչեւ կրթություն, տնտեսությունից մինչեւ մարզաշխարհ:

Նշանակալի է քո դերակատարությունը մեզ՝ հայերիս. պետական տեղեկատվությամբ ապահովելու, վրաց հասարակություն ինտեգրվելու, հայ եւ վրաց ժողովուրդներին մերձեցնելու գործում:

Լինելով երկրում հայալեզու մամուլի ամենահին ու միաժամանակ հավերժ պատանին, մարտահրավերներով լի ու երկար ուղի ես անցել, սակայն պահպանել ես քո դերակատարությունն ու դիմագիծը, արդիական լուծումներ գտել՝ շարունակելով նպաստ բերել հասարակության զարգացման գործին:

«Արշալույս» թերթի խմբագրակազմի անունից շնորհավորելով լույսընծայմանդ 100-ամյա հոբելյանը, մաղթում եմ շարունակական արդյունավետ գործունեություն, ստեղծագործական հաջողություններ եւ հավատարիմ ընթերցողների մեծաթիվ բանակ:

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Արշալույս» թերթի խմբագիր
Նինոծմինդայի մունիցիպալիտետ

ԹՎՈՎ ՉՈՐՐՈՐԴ ՆՈՒՆԵՆԻՆ

ՓԱՐԱՋԱՆՈՎՅԱՆ «ՍՈՓԻԿՈ ՃԻԱՈՒՐԵԼԻ» ՆՈՒՆԵՆԻՆ՝ «ՎՐԱՑՖԻԼՄ»-Ի ԲԱԿՈՒՄ

Հանրահռչակ Սոփիկո Ճիաուրելին թատրոնի եւ կինոյի դերասանուհի, Վրաստանի եւ Հայաստանի ժողովրդական արտիստուհի:

Սոփիկո Ճիաուրելին կինոյում նկարահանվել է ավելի քան 50 դերերում, միջազգային կինոփառատոներում 7 անգամ արժանացել՝ «Կանանց լավագույն դերի համար» մրցանակի: Բայցեւայնպես, ինչպես նկատել են կինոյի փորձագետները, նա առանձնակիորեն ոգեւորվում էր թբիլիսահայ կինոռեժիսոր եւ բացառիկ անձնավորություն Սերգեյ Փարաջանովի կինոնկարներում:

Վրաց ճանաչված կինոօպերատոր եւ ռեժիսոր Գիա Ալավիձեի՝ Խոսե Մաջիներե նախաձեռնությամբ, «Վրացֆիլմ» կինոստուդիայի տարածքում, Սոփիկո Ճիաուրելու ծննդյան օրը, ի հիշատակ նրա, անցկացվեց նրան նռնենու՝ բարօրության եւ պտղաբերության խորհրդանիշի ծիսակարգային տնկարկման արարողությունը: Դրանով եզրափակվեց «Փարաջանովի չորս մուսաներ» միջոցառումների շարքը: Նախորդ երեք միջոցառումները (տնկիների տնկարկումը Թբիլիսիի բուսաբանական այգում, Խոջիվանքի պանթեոնում, Իլիայի (նախկինում՝ Գորկու անվան) զբոսայգում) նվիրված էին «Աշուղ Քերիբ» ֆիլմում նկարահանված դերասանուհի Բայա Դվալիշվիլիին, թբիլիսահայ նկարչուհի Գայանե Խաչատրյանին, ռեժիսորի հովանու ներքո գտնվող ջազային դաշնակահարուհի Թինա Վիրսալաձեին: Նշենք, որ Թինան նկարահանվել էր Փարաջանովի «Սուրամի ամրոցի առասպելը» ֆիլմում՝ մարմնավորելով Սուրբ Նինոյին:

«Վրացֆիլմ» կինոստուդիայում «Նռնենու ծիսակարգը» անցավ առանձնակի հանդիսավոր միջավայրում: Դրան մեծապես նպաստեց կինոռեժիսոր եւ կինոստուդիայի պիար-մենեջեր Լեւան Կուպարաձեն: Թբիլիսյան կինոֆաբրիկայի պահեստարանում պահվող բազում ռիկվիզիտների շարքում նա գտավ Սերգո Փարաջանովի ֆիլմերում օգտագործվող առանձին առարկաները եւ դրանով ձեւավորեց նռնենիների տնկարկման ծիսակարգի տարածքը: Նա էլ ցուցադրեց վավերագրական «Մի դիմանկար» ֆիլմի տեսակադրերը, որը նրան փոխանցել էր ֆիլմի հեղինակ, ֆրանսիացի կինոռեժիսոր Պատրիկ Կազալսը, որտեղ Սոփիկոն պատմում էր Փարաջանովի հետ իր ստեղծագործական համագործակցության մասին եւ խոսում նաեւ նրա անունով Թբիլիսիում թանգարան բացելու երազանքի մասին:

Տնկարկման արարողության մեկնարկում՝ Գիա Ալավիձեն ներկայացրեց իր նախաձեռնության նախապատմությունը: Ապա, իր ելույթում ճանաչված կինոռեժիսոր եւ դերասան Մերաբ Կոկաչաշվիլին բարձր գնահատեց այս՝ վրաց կինոստուդիայի տարածքում կինոյի երկու հիանալի ներկայացուցիչների հիշատակը հավերժացնող նռնենիների տնկարկման նախաձեռնությունը, որի արդյունքում տարածքում հայտնվեց նռնենիների պլանտացիա: Իմիջիայլոց, հենց նրան էլ վիճարկվեց նորատունկը ջրելու պատվավոր առաքելությունը:

Հասարակական գործիչ, մարզական մեկնաբան Ջամլետ Խուխաշվիլին եւ նրա տիկին՝ Եվա Բաբալաշվիլին ցանկություն հայտնեցին Թբիլիսիում հիմնել Փարաջանովի անվան թանգարան: Նույն գաղափարը արդեն որերորդ անգամ պաշտպանեցին նաեւ «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը եւ վրաց կինոակադեմիայի անդամ, Փարաջանովի հետ մտերիմ Լուիզա Նիազյանը: Առավել եւս, որ մի քանի քաղաքացի արդեն Գիային են հանձնել ապագա թանգարանի առանձին ցուցանմուշներ: Ներկայումս դրանք պահվում են Հովհաննես Թումանյանի տանը:

Միջոցառմանը Միքայել Անանովը եւ նրա դուստր՝ Աննան կարդացին Փարաջանովի եւ նրա մուսա Սոփիկոյին նվիրված բանաստեղծությունները: Եվ արդեն որերորդ անգամ բանաստեղծ, դերասան Գարրի Ղալամքարովն ընթերցեց Իոսեբ Գրիշաշվիլու, Սերգեյ Փարաջանովի բազմակողմ կերպարը ներկայացնող տողերը:

Այսպիսով, ավարտվեց Գիա Ալավիձեի եւ Վիրահայոց թեմի, Հովհաննես Թումանյանի թբիլիսյան տան համատեղ հիանալի նախագիծը: Առաջիկայում ծրագրվում է, հուլիսի 22-ին, կինոռեժիսորի մահվան օրը Խոջիվանքի պանթեոնում անցկացնել հիշատակի միջոցառում:

ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈՋՈՎ

ԿՐԹԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐԱԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՑԱԾՐ Է

Ինչպես տեղեկացրել են Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունից, Վրաստանում հեռավար կրթության պայմանակարգով 63 դպրոց եւ 188 առանձին դասարան են:

Նշենք, որ աշակերտը հեռավարի է անցնում՝ ծնողի խնդրանքով կամ կորոնավիրուս հաստատվելուց հետո:

Վրաստանում 2300 պետական ու մասնավոր դպրոց կա:

Ինչ վերաբերում է հանրակրթական հաստատություններում վարակման հարցին, ապա, գերատեսչության տեղեկատվությամբ, մայիսի 13-ից 21-ը դպրոցներում անցկացված մոնիտորինգի տվյալներով, ուսուցիչների եւ դպրոցի տնօրինության ներկայացուցիչների շրջանում վարակման ցուցանիշը կազմում է 0,05 տոկոս:

Ավելացել է ռիսկի խմբում գտնվող ուսուցիչների թիվը, որոնք ցանկություն են հայտնել հեռավար աշխատել (120 ուսուցիչ): Վարակի տարածման դեպքերից ելնելով, դպրոցներում ներդրվում են կետային սահմանափակումներ:

Կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելու հայտարարությամբ, Վրաստանի հանրային եւ մասնավոր դպրոցների համար 2020-2021 ուսումնական տարին դասասենյակներում ավարտելը գլխավոր առաջնահերթությունն է, հետեւաբար, ամեն ինչ արվում է վարակի տարածման դեմ ներդրված սահմանափակումների խստիվ պահպանման համար:

«ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻՆ» ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ ՄԵԾ ՈՒՍՈՒՑՉԻ ՈԳԻՆ ԷՐ ԹԵՎԱԾՈՒՄ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոքր Արագյալի հանրային դպրոցը հաճախ է անակնկալներ մատուցում ծնողներին, հյուրերին եւ մանավանդ տոնական օրերին:

Եվ ահա «Հայերեն երգենք» երգի հնչյունների ներքո համարձակ ու վստահ քայլերով դպրոցի բակում տեղադրված բեմահարթակ են բարձրանում առաջին դասարանցիներ Նարե եւ Սարգիս Եղոյանները, Հասմիկ եւ Անի Ծառուկյանները, Մերի Պապոյանն ու Մերուժան Կյուրեղյանը՝ երիտասարդ դասվար Սյուզաննա Բոռբոռյանի ուղեկցությամբ: Մանկավարժները, ծնողներն ու աշակերտները ծափերով ողջունում են փոքրիկներին, որոնք, ասես, գույնզգույն թիթեռնիկներ լինեն: Այսպես բացվում է ավանդական «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումը:

Այս օրվան հուզմունքով էին սպասել առաջին դասարանցիները: Չէ՞ որ այդ օրը նրանք տառաճանաչ դարձած հնչեցնելու էին հայոց երգն ու խոսքը, արտասանելու էին հայ մեծանուն գրողների ստեղծագործություններից:

Ողջույնի խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Մելանյա Վարդանյանը:

Բակում մանուկների շուրթերով ղողանջում էր Մեսրոպ Մաշտոցին նվիրված երգեր, ոտանավորներ, հանելուկներ, հայկական հուզիչ մեղեդիներ:

Որքա՜ն հաճելի էր ծնողների եւ բոլոր մասնակիցների համար՝ զգալ, որ երեկվա թոթովախոս մանուկներն այսօր գեղեցիկ, այսպես վստահորեն արտասանում են մաշտոցյան տառերով հյուսված բառեր, նախադասություններ:

Մեսրոպյան այբուբենը, մեր ժողովրդի հոգեւոր գանձերը մանուկների սրտին ու հոգուն հասել էին իրենց սիրելի դասվար Սյուզաննայի միջոցով:

Դասվարին իրենց երախտագիտության ու շնորհակալական խոսքն ուղղեցին ծնողներ Սուսաննա Ծառուկյանը, Ռուզաննա Եղոյանը եւ Մելինե Ծառուկյանը:

Վերջում առաջին դասարանցիները բեմադրեցին «Անբան Հուռին» եւ «Կարմիր գլխարկը» հեքիաթները:

«Այբբենարանին» հրաժեշտի ավանդական հանդեսն ավարտվեց անջնջելի տպավորություններով: Դա առաջին դասարանցիների կյանքի անմոռաց դասն էր, պայքարի, հավատի, մաքառման դասը:

ԿՈՐՅՈՒՆ ԲԱՍԵՆՑՅԱՆ
Փոքր Արագյալի հանրային դպրոցի ուսուցիչ
Նինոծմինդայի մունիցիպալիտետ

COVID - 19

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԿԻՐԱՐԿՎԵՆ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի՝

Վրաստանի կառավարությունում գործող միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, երկրում հունիսի 1-ից կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով սահմանված որոշ սահմանափակումներ մեղմացվում են:

Մասնավորապես, հունիսի 1-ից Վրաստանը օտարերկրյա այցելուների համար բացում է ցամաքային սահմանները, «PCR» թեստի բացասական պատասխանով Վրաստան մուտք գործելու իրավունք կստանան նաեւ Կանադայի, Ճապոնիայի, Քուվեյթի, Չինաստանի, Հարավային Կորեայի, Մոլդովայի եւ Օմանի քաղաքացիները:

Հունիսի 1-ից վերացվում են սննդի կետերի սահմանափակումները, ինչը նշանակում է, որ վերջիններս կկարողանան փակ տարածքներում աշխատել նաեւ շաբաթ եւ կիրակի օրերին:

Վրաստանի կառավարության որոշմամբ, երկրում ուժի մեջ կմնան տարբեր սոցիալական՝ հարսանիքների, թաղման արարողությունների, բանկետների եւ այլ միջոցառումների անցկացման սահմանափակումները:

Ուժի մեջ է մնում նաեւ երեկոյան 23:00-05:00-ն տեղաշարժի արգելքը:

Նշենք, որ Վրաստանի քաղաքացիների համար սահմանը հատելու կարգը մնում է անփոփոխ.

Միջգերատեսչական համակարգող խորհրդի պարզաբանմամբ՝ ցամաքային սահմանների բացումը վերաբերում է միայն օտարերկրյա այցելուներին: Ինչ վերաբերում է Վրաստանի քաղաքացիների երկրից դուրս գալուն, ապա այդ հարցով գործող կարգավորումները դեռեւս մնում են ուժի մեջ: Երկրից դուրս գալու դեպքում նրանք պետք է ունենան հատուկ իրավեր, կամ հատուկ թույլտվություն, որից հետո միայն կկարողանան հատել երկրի սահմանը: Վերադարձի հետ կապված որեւէ սահմանափակում չկա:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ ԵՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀՆԴԿԱԿԱՆ ՇՏԱՄՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳ ԴԵՊՔԵՐԸ

Մայիսի 27-ին, Վրաստանի Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնի տվյալներով, երկրում արձանագրվել են SARS-CoV-2 հնդկական շտամով վարակման առաջին հինգ դեպքերը:

«Ցանկանում ենք տեղեկացնել, որ Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնն իր իրավասության շրջանակներում մշտապես հետեւում է երկրում շրջանառվող SARS-CoV-2 շտամների տարածմանը: Համաճարակաբանական հսկողության արդյունքում, երկիր մտնող հինգ ճանապարհորդներից վերցված նմուշի «PCR» հետազոտություններով պարզվել է, որ այդ անձինք վարակված են SARS-CoV-2 հնդկական շտամով:

Բոլոր վարակվածները նույնականացվել եւ մեկուսացվել են: Նրանք Վրաստան են մուտք գործել տարբեր ամսաթվերին, նույն երկրից, բայց տարբեր երկրների քաղաքացիներ են: Նրանցից երեքն արդեն լքել են երկիրը:

Համաճարակաբանական տվյալների համաձայն, նրանց կլինիկական վիճակը բավարար է», - ասված է հայտարարության մեջ:

Մեկնաբանելով հնդկական շտամով վարակման փաստի առկայությունը, Հիվանդությունների վերահսկման կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ հնդկական շտամը որեւէ առանձնահատուկ բան չի առաջացնում:

Նրա խոսքով, կորոնավիրուսի բոլոր շտամները մոտավորապես նույն ընթացքն ունեն:

- Հնդկական շտամը հատուկ բան չի առաջացնում, ինչպեսեւ բրիտանական շտամը: Կորոնավիրուսի բոլոր շտամները մոտավորապես նույն ընթացքն ունեն, ի տարբերություն բրիտանականի եւ հնդկականի, դրանք արագ տարածվում են նույնիսկ երիտասարդների շրջանում: Ինչ վերաբերում է հիվանդության ծանր ընթացքին, ապա այդ տարբեր շտամների միջեւ մեծ տարբերություն չկա,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ Է, ՍԱԿԱՅՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿՎԻ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեի հայտարարությամբ, համաճարակային իրավիճակը բարելավվում է, բայց դա հանգստի հիմք չի տալիս, քանի որ Վրաստանի համար վարակի նոր դեպքերի օրական մակարդակը դեռ բարձր է:

Պաատա Իմնաձեն կրկին կոչ արեց քաղաքացիներին՝ հնարավորինս պաշտպանել կանոնակարգերը:

«Դեպքերը նվազում են ամեն շաբաթ, եթե նայենք շաբաթական տվյալներին, գագաթնակետից հետո առաջին շաբաթվա ընթացքում կար մոտ 1500 դեպք, ապա շաբաթվա ընթացքում՝ ավելի քիչ, մոտավորապես՝ 1000 դեպք, նույնիսկ ավելի քիչ, բայց դա մեզ հանդարտվելու հիմք չի տալիս, քանի որ օրական 1000 դեպքը Վրաստանի համար շատ է:

Եկեք չապավինենք վարակի թուլացմանը, ապավինենք մեզ, որ հնարավորինս հետեւենք գործող կանոնակարգերին, քանի որ գործնականում բոլոր սահմանափակումները հանվել են, մնացել են միայն կանոնակարգերը: Հետեւաբար, եթե հնարավորինս հետեւենք կանոնակարգերին, ապա ավելի ու ավելի քիչ դեպքեր կգրանցենք,- ընդգծել է Պաատա Իմնաձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 169 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 169 649 619-ից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 3 525 511-ը: Ապաքինվել է 151 միլիոն 382 հազար 212 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **33 999 680** դեպք: Այստեղ մահացածների թիվը **607 726** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **27 555 457**-ի, մահացածներինը՝ **318 895**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **16 342 162**, մահացել՝ **456 753** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **5 635 629**, վարակի հետեւանքով մահացել՝ **109 165** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Թուրքիան, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Գերմանիան ու Արգենտինան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **222 513**-ի, մահացածներինը՝ **4 423**-ի, ապաքինվածներինը՝ **212 566**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **333 317** մարդ: Վարակից մահացել է **4 891,** ապաքինվել՝ **322 806** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **341 894,** մահացել՝ **4 727,** ապաքինվել՝ **324 426** մարդ:

*Մայիսի 28-ին կորոնավիրուսով վարակման **1056** նոր դեպքերից **569-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 102, Իմերեթիում՝ 103, Քվեմո Քարթլիում՝ 58, Շիդա Քարթլիում՝ 40, Գուրիայում՝ 14, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 84, Կախեթիում՝ 39, Մցխեթա-Մթիանեթիում՝ 24, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 7, Սամցխե-Ջավախեթիում՝ 16:***

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՏԵՄՊԵՐՈՎ ՎՐԱՍՏԱՆԸ ՇՐՋԱՆՑԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Covid-19-Ի ԴԵՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՇՈՒՐՋ 20 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ ԼԻԱՐԺԵՔ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է

Մայիսի 27-ի դրությամբ, Վրաստանում կորոնավիրուսի դեմ ընդհանուր հաշվով պատվաստվել է 125 601 մարդ: Լրիվ պատվաստման կուրսն անցել է 19 392 քաղաքացի:

Վրաստանում պատվաստման գործընթացը մեկնարկեց մարտի 15-ից՝ միայն բժշկական ոլորտի աշխատողների համար: Ավելի ուշ պատվաստվողների խումբն ընդլայնվեց եւ պատվաստվել սկսեցին նաեւ 65 տարեկանից բարձր քաղաքացիները: Այժմ «AstraZeneca» տեսակի պատվաստանյութով պատվաստվելու համար կարող են գրանցվել 45 տարեկանից բարձր քաղաքացիները:

18 տարեկանից բարձր քաղաքացիների պատվաստումն ընթանում է չինական «Սինոֆարմ» տեսակի պատվաստանյութով: Մայիսի 24-ից 18 տարեկանից բարձր քաղաքացիները պատվաստվում են «Սինովակ» տեսակի պատվաստանյութով:

Պատվաստման գործընթացն իրականացվում է կամավորական սկզբունքով: Պատվաստվելու համար նախապես պետք է գրանցվել:

Ինչպես տեղեկացրել է վրացական «Ռեզոնանսի» թերթը, կորոնավիրուսի դեմ պատվաստման տեմպերով Վրաստանը շրջանցեց Ուկրաինային եւ Հայաստանին:

Կորոնավիրուսի դեմ պատվաստման տեմպերը Վրաստանում նշանակալիորեն աճեցին եւ այդ միտումը արտահայտվեց նաեւ պաշտոնական վիճակագրությամբ: Մայիսի 27-ի տվյալներով, երկրի բնակչության 2,55 տոկոսն անցել է կորոնավիրուսի դեմ առնվազն մեկ պատվաստում, եւ այդ ցուցանիշով Վրաստանը հավասարվել է առանձին երկրների, մասնավորապես, Իրանին, Կոնգոյին, Ֆիլիպիններին եւ Հարավային Աֆրիկայի Հանրապետությանը: Ինչ վերաբերում է հարեւան երկրներին, ապա այդ առումով Վրաստանը դեռեւս զիջում է Թուրքիային, Ռուսաստանին եւ Ադրբեջանին, թեեւ նշանակալիորեն շրջանցել է Հայաստանին:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՎՈՒՄ Է ՉՈՐՍ ՏԵՍԱԿԻ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության իմունիզացիայի եւ պատվաստումների կառավարվող հիվանդությունների ծրագրի կառավարիչ Սիդհարթա Դատայի հայտարարությամբ, Վրաստանի կառավարությունը փորձում է թափանցիկ կերպով կառավարել կորոնավիրուսի հետ կապված գործընթացները:

Ըստ նրա, կառավարությունը հենց սկզբից մեծ ջանքեր է գործադրել համավարակը կառավարելու համար:

- Մենք հետեւում ենք, թե ինչ է արել Վրաստանը COVID-19-ի դեմ: Կառավարության կողմից հասարակության հետ տեղեկատվություն կիսելու գործում բաց լինելը եւս մեկ անգամ ապացուցում է, որ նրանք փորձում են թափանցիկ կառավարել գործընթացը:

Ի սկզբանե լավ ջանքեր են գործադրվել, նրանք հենց սկզբից փորձել են բուժել բոլոր հիվանդներին, համապատասխանաբար, վերազինել բոլոր բժշկական հաստատությունները: Այնուամենայնիվ, այն փաստը, որ այսօր երկրում արդեն առկա են չորս տարբեր պատվաստանյութեր, նշանակում է, որ կառավարությունը մեծ աշխատանք է կատարել:

Այսօր, իմ վրացի գործընկերներից, լսել եմ օրինակներ, որոնք մենք կարող ենք արդյունավետ օգտագործել ոչ միայն Վրաստանում, այլ նաեւ շատ այլ երկրներում: Ամփոփելով կարող եմ ասել, որ Վրաստանի կառավարությունը եւ բժշկական հաստատությունները շատ կարեւոր եւ անգնահատելի աշխատանք են կատարել այս գործընթացը ղեկավարելու գործում,- հայտարարել է Սիդհարթա Դատան:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

COVID-ի ՏԱՐԱԾՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԱՃԵՑ

Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը, 2021-ի հունվար-ապրիլին, 2,6 տոկոսով աճել է 2020-ի նույն ժամանակահատվածի համեմատ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 0,9 տոկոսով: Շինարարության ծավալն այս տարվա հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, աճել է 20,3 տոկոսով: Առեւտրի շրջանառությունում աճը կազմել է 4,8 տոկոս, իսկ մատուցված ծառայությունների ծավալը (առանց առեւտրի) նվազել է 2,9 տոկոսով:

2021 թվականի հունվար-ապրիլին սպառողական գների ինդեքսն աճել է 5,4 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 8,1 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալն աճել է 3,1 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառության ծավալներում այս տարվա հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, նկատվել է 7.2 տոկոս աճ (կազմելով՝ 2 170,3 մլն դոլար), ընդ որում՝ արտահանումն աճել է 16,7 տոկոսով (կազմելով՝ 818,7 մլն դոլար), ներմուծումը՝ 2,2 տոկոսով (կազմելով՝ 1 351,6 մլն դոլար):

2021թ. ապրիլին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, տնտեսական ակտիվությունն աճել է 23,2 տոկոսով, շինարարության ծավալն աճել է 87,7 տոկոսով, արտաքին առեւտրաշրջանառությունը՝ 47,5 տոկոսով:

Կորոնավիրուսի տարածումից ի վեր ինչպես աշխարհում, այնպես էլ՝ Հայաստանի տնտեսությունում գրանցվում էր անկում:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԱՌԱՋԻՆ 30 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Մայիսի 26-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հրապարակեց ընտրական ցուցակի առաջին երեսուն համարների թեկնածուների անունները:

Ցուցակը գլխավորում է Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, երկրորդն ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանն է, երրորդը՝ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցը: Չորրորդ համարի տակ ներկայացվել է Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատար Սուրեն Պապիկյանը, հինգերորդ համարի տակ՝ տնտեսական եւ քաղաքական գործիչ, հայտնի գործարար Խաչատուր Սուքիասյանը, վեցերորդ համարի տակ՝ Ազգային ժողովի փոխնախագահ, հայ-վրացական բարեկամության խորհրդարանական խմբի համանախագահ Լենա Նազարյանը:

Ցուցակի անցողական համարներում են նաեւ ծագումով ախալքալաքցի հասարակական, քաղաքական գործիչներ Արսեն Թորոսյանը (ցուցակում 10-րդն է), Արմեն Փամբուկչյանը (20) եւ ծագումով Նինոծմինդայի Գանձա գյուղից Շիրակ Թորոսյանը (26):

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐԸ՝ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Մայիսի 26-ին, աշխատանքային այցով, Հայաստանում էր գտնվում Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար Մոհամմադ Զավադ Զարիֆը: Այցի շրջանակներում՝ Իրանի ԱԳ նախարարի հետ հանդիպումներ ունեցան Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը, Հայաստանի Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Արա Այվազյանը:

Հայաստանի կառավարության նստավայրում կայացած հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը, ողջունելով Իրանի ԱԳ նախարարին, մանրամասն տեղեկատվություն հայտնեց վերջին ժամանակներում տարածաշրջանում ծավալվող իրադարձությունների մասին, նշելով հայկական կողմի դիրքորոշումը:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին հայ-ադրբեջանական սահմանին ստեղծված իրավիճակի հանգուցալուծմանն ուղղված քայլերը: Իրանի ԱԳ նախարարը շեշտեց իր երկրի շահագրգռվածությունը՝ տարածաշրջանի կայունության ապահովման, Հայաստանի տարածքային ամբողջականության լիարժեք պահպանման ու ապահովման հարցում:

Նիկոլ Փաշինյանը եւ Մոհամմադ Զավադ Զարիֆն անդրադարձան նաեւ տնտեսության ոլորտում երկու երկրների փոխգործակցության հետագա զարգացմանը վերաբերող մի շարք հարցերի: Կարեւորվեց փոխգործակցության շարունակական զարգացումը գազ/էլեկտրաէներգիա փոխանակման ծրագրի շրջանակում, մասնավորապես, անհրաժեշտ է համարվել ծրագրի ժամկետի երկարաձգումը, գազի եւ էլեկտրաէներգիայի ծավալների մեծացումը, ենթակառուցվածքների զարգացման ոլորտում համատեղ ծրագրերի իրականացումը, կրթության, մշակույթի բնագավառներում հարաբերությունների ընդլայնումը:

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի եւ Իրանի Արտաքին գործերի նախարար Մոհամմադ Զավադ Զարիֆի հանդիպմանն ընդգծվեց, որ Հայաստանն Իրանին համարում է վստահելի գործընկեր ու բարեկամ հարեւան: Նախագահի խոսքով, տարածաշրջանում ստեղծված բարդ իրավիճակի պայմաններում չափազանց կարեւոր են դարձել Հայաստանի եւ Իրանի միջեւ հարաբերությունների առավել զարգացումն ու խորացումը:

Իր հերթին, Մոհամմադ Զարիֆը շեշտեց, որ Իրանը կողմնակից է տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ու կայունության ապահովմանը եւ պատրաստ է հնարավոր ջանքեր ներդնել այդ ուղղությամբ: Նա միաժամանակ շեշտեց իր երկրի շահագրգռվածությունը՝ Հայաստանի տարածքային ամբողջականության լիարժեք պահպանման ու ապահովման հարցում՝ նշելով, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը կարեւորում է հարգանքը միջազգային իրավունքի նորմերի հանդեպ:

Հայաստանի նախագահն ու Իրանի ԱԳ նախարարն անդրադարձան նաեւ հայ-իրանական երկկողմ օրակարգին:

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՇՆՉԱԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ

Հունիսի 1-ից Հայաստանում բաց տարածքներում շնչադիմակ կրելը այլեւս պարտադիր չի լինի: Համապատասխան հանձնարարականը տրվել է երկրի առողջապահության նախարարության կողմից:

Հուլիսի 1-ից, երկու դեղաչափերով լիարժեք պատվաստված քաղաքացիները կկարողանան առանց շնչադիմակի գտնվել նաեւ փակ տարածքներում:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ

Հայաստանի Արտաքին գործերի նախարար Արա Այվազյանը հրաժարական է տվել:

Այվազյանի հրաժարականի մասին լուրը տարածվել է նրանից հետո, երբ Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել՝ հայ-ադրբեջանական սահմանի մոտ միջազգային դիտորդներ ուղարկելու նախաձեռնությամբ:

ՀԱՊԿ-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՄՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունն ի գիտություն է ընդունել Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի դիմումը:

- Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի տեղեկությունն ընդունվել է ի գիտություն: ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նախագահ Էմոմալի Ռահմոնի հանձնարարությամբ համապատասխան աշխատանքը շարունակվում է,- հայտարարել է ՀԱՊԿ մամուլի քարտուղար Վլադիմիր Զայնետդինովը:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՊՐՈՅԱՆԸ



Բեյրութում, մայիսի 25-ի առավոտյան մահացել է Հայ Կաթողիկե պատրիարք Գրիգոր եպիսկոպոս Կապրոյանը:

Գրիգոր Կապրոյանը ծնվել է 1934 թվականի նոյեմբերի 15-ին, Սիրիայի Հալեպ քաղաքում: Նա քահանա է կարգադրվել 1959-ի մարտի 28-ին, եպիսկոպոս դարձել՝ 1977 թվականին:

Գրիգոր եպիսկոպոս Կապրոյանը Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց կաթողիկոսպատրիարք է դարձել 2015 թվականի հուլիսի 25-ին՝ փոխարինելով երջանկահիշատակ Ներսես Պետրոս 19-րդ Թարմունուն: Գրիգոր եպիսկոպոս Կապրոյանը մինչեւ 2013 թվականի ապրիլը Ֆրանսիայի հայ կաթոլիկների եպիսկոպոսն էր:

ՓԱՐԻԶՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Մայիսի 22-ին, աշխարհահռչակ ֆրանսահայ շանսոնյե Շառլ Ազնավուրի 97-ամյակին, Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում հանդիսավոր արարողությամբ բացվեց Շառլ Ազնավուրի կիսանդրին:

«Փարիզի եւ բոլոր մարդկանց համար սա շատ կարեւոր օր է: Ինձ համար մեծ պատիվ է այսօր գտնվել այստեղ եւ մասնակցել այս արարողությանն ու բացել Շառլ Ազնավուրի կիսանդրին»,- միջոցառման կապակցությամբ ֆեյսբուքյան էջում գրել է Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոն:

- Այս գործը ստեղծել է հայ քանդակագործ Ալիս Մելիքյանը: Հայրս Փարիզում, ինչպես նաեւ ամբողջ աշխարհում հայտնի է եղել իր ողջ կյանքի ընթացքում, նա միշտ շարունակել է մնալ որպես ֆրանսիական կուլտուրայի դեսպան,- նշել է շանսոնյեի որդին, «Ազնավուր» հիմնադրամի ղեկավար Նիկոլա Ազնավուրը:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Ազնավուրի քույրը՝ Աիդա Ազնավուրը, ինչպես նաեւ Նիկոլայի կինը՝ Քրիստինա Սարկիսյանը:

Ֆրանսահայ նշանավոր շանսոնյե, երգիչ, երգահան, կինոդերասան եւ հասարակական գործիչ Շառլ Ազնավուրը ծնվել է 1924 թվականի մայիսի 22-ին, Փարիզում:

1995 թվականից սկսած ն ներկայացրել է Հայաստանը բազմաթիվ միջազգային դիվանագիտական ատյաններում: 2008 թվականին Ազնավուրը ստացել է Հայաստանի քաղաքացիություն, 2009 թվականի մայիսից Շվեյցարիայում Հայաստանի դեսպանն էր եւ Ժնեւի ՄԱԿ-ի գրասենյակում եւ այլ միջազգային կազմակերպություններում Հայաստանի մշտական ներկայացուցիչը:

Նա մահացել է 2018-ին, հոկտեմբերի 1-ին:

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀԱՅՏՆԻ ԵՐԳԵՐԻՑ ՄԵԿԸ ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ԷՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ

Աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի ծննդյան օրվա առիթով երգիչ, ծնունդով թբիլիսցի Էրիկ Կարապետյանը հայերեն թարգմանությամբ մատուցել է հեղինակի «Մնա» (Reste) սիրված ստեղծագործությունը: Երգը ֆրանսերենից թարգմանել է Սամվել Դավթյանը:

Տեսահոլովակը, որի ռեժիսորը Սերգեյ Դավթյանն է, արդեն հասանելի է համացանցում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍ *30.05.2021 Եղիա մարգարեի հիշատակության օր*

31.05.2021 Հռիփսիմյանց կույսերի հիշատակության օր

Ազնվազարմ Հռիփսիմեն 37 քրիստոնյա կույսերից մեկն էր, որ Գայանե մայրապետի հետ ապրել է Դիոկղետիանոս կայսեր օրոք (284-305 թթ.) Հռոմի լեռներում գտնվող Սբ. Պողոս վանքում: Խոուսափելով կայսրի հետապնդումներից, կույսերը իրենց մայրապետի առաջնորդությամբ փախչում են Ալեքսանդրիա: Ավանդույթի համաձայն՝ տեսիլքով նրանց երեւում է Սբ. Աստվածածինը եւ պատվիրում՝ մեկնել Արարատյան երկիր՝ Հայաստան: Կույսերը գալիս են Վաղարշապատ: Ճանապարհին, Վարագա լեռան մոտով անցնելիս, Հռիփսիմեն Սբ. խաչափայտից մի մասունք, որը ժառանգաբար էր ստացել եւ միշտ կրում էր իր պարանոցին, ամփոփում է հայոց հողում: Այդ մասունքը հրաշքով գտնվում է 7-րդ դարում, որից հետո Հայ Առաքելական Եկեղեցին խաչի տոների շարքում սկսում է տոնել նաեւ Վարագա խաչի տոնը: Հայոց Տրդատ արքան, չկարողանալով տիրանալ գեղեցկատես Հռիփսիմեին, հրամայում է սպանել բոլոր կույսերին: Նահատակ կույսերի նշխարներն ինն օր անց գտնում, հողին է հանձնում Սբ. Գրիգոր Լուսավորիչը: Հետագայում, հենց այդ վայրերում կառուցվում են Սբ. Հռիփսիմե, Սբ. Գայանե եւ Սբ. Շողակաթ եկեղեցիները: Կույսերի նահատակությունը շրջադարձային նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ: Նրանց նահատակությունից հետո, 13-ամյա բանտարկությունից ազատ է արձակվել Սբ. Գրիգոր Լուսավորիչը, որ կոչված էր Քրիստոսի լույսը տարածելու հայոց աշխարհում:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ ԴԻՐՔԵՐԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսի կապակցությամբ ազգային հավաքականների ծրագրված հանդիպումները կամ հետաձգվել են, կամ չեղարկվել նախորդ աղյուսակի համեմատությամբ, փոփոխություններ չեն իրականացվել: Վրաստանի հավաքականը, նախորդի օրինակով, շարունակում է զբաղեցնել 91-րդ հորիզոնականը, իսկ Հայաստանի ազգային ընտրանին աղյուսակում 90-րդն է:

Աղյուսակի առաջին հորիզոնականը զբաղեցնում է աշխարհի գործող բրոնզե մեդալակիր Բելգիան: Նրան հաջորդում են աշխարհի գործող չեմպիոն Ֆրանսիան, Բրազիլիան, Անգլիան եւ Պորտուգալիան:

ՎԱՐԴԱՏՈՆ - 2021

...ԻՍԿ ԱՅՍ ՏԱՐԻ ՍԱՅԱԹՆՈՎՅԱՆ ՏՈՆԸ ԿՆՇԱՆԱՎՈՐՎԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԵՐԹՈՎ



Համավարակով պայմանավորված սահմանափակումների պայմաններում այս տարի եւս Թբիլիսիում չի կայանալու Սայաթ-Նովյան Վարդատոնի ժողովրդական տոնախմբություն:

Այդուհանդերձ, Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնի նախաձեռնությամբ, խորհրդանշական երթ է կազմակերպվելու: Մայիսի 30-ին, ժամը 10:30 երթը մեկնարկելու է Թումանյանի տանից (հասցե՝ Ամաղլեբա փողոց # 18)՝ Ամաղլեբա-Լադո Ասաթիանի-Հովհաննես Թումանյան փողոցներով դեպի Մեյդանում տեղադրված Սայաթ-Նովյան հուշակոթող, ապա Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու գավթում՝ Սայաթ-Նովայի շիրմաքար: Ծաղիկների խոնարհման արարողությանը զուգահեռ, Սուրբ Գեւորգ եկեղեցում կմատուցվի Սայաթ-Նովային նվիրված պատարագ եւ հոգեհանգստյան կարգ:

«Վրաստանի» հետ զրույցում «Թումանյանի տուն» կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը պարզաբանում է երթի նախապատմությունը.

- 1914 թվականի մայիսի 15-ին, երբ բացվեց Սայաթ-Նովայի շիրմաքարը, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանն իր տանը համախմբեց հայ ու վրացի մտավորականներին, որոնց թվում էին շիրմաքարի նախագծի հեղինակ, նկարիչ Գեւորգ Բաշինջաղյանը, վրաց անվանի բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլին: Նրանք վարդերը ձեռքներին, ոտքով իջան Սուրբ Գեւորգ եկեղեցի: Այս տեսարանն իր անասելի, գեղեցիկ թբիլիսյան նկարագրությունն ունի. ամբողջ ճանապարհին, որն անցնում էր քաղաքի բազմազգ թաղամասերով, նրանց էին միանում հայ, վրացի ու այլ ազգերի մտավորականներ: Հիմա մենք նույն ճանապարհով կգնանք դեպի աշուղ-բանաստեղծի շիրիմ... Կարծում եմ, սա ոչ միայն հարգանքի տուրք, այլեւ գեղեցիկ ուխտագնացություն կլինի բոլորիս համար: Տարին ծանր էր, թող որ յուրաքանչյուրս այդ օրը Սայաթ-Նովյան շունչն ու պատգամը տանենք մեր օջախներ...:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2021»

ՓԱՌԱՏՈՆԻ ՀԱՂԹՈՂ Է ԴԱՐՁԵԼ ԻՏԱԼԻԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉԻՑ

Նիդերլանդներում ընթացող եզրափակիչ համերգին հայտնի է դարձել «Եվրատեսիլ-2021»-ի հաղթողը: Հաղթող երկիր է ճանաչվել Իտալիան - Maneskin համույթով: Հետեւաբար, այս երկիրը կլինի Եվրատեսիլի հաջորդ հյուրընկալողը:

Նշենք, որ Վրաստանից ժյուրիի ամենաբարձր՝ 12 միավորը, բաժին է հասել հենց Իտալիային: Եվրատեսիլի հանդիսատեսին Վրաստանից միավորները ներկայացրել է Օթո Նեմսաձեն:

Առաջին եւ երկրորդ կիսաեզրափակիչներից եզրափակիչ փուլ անցան 20 երկրների ներկայացուցիչներ: Եվրատեսիլի եզրափակչում այդ երկրների հետ միասին հաղթանակի համար պայքարում էին նաեւ «Մեծ հնգյակի» երկրները՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Իտալիան եւ Իսպանիան:

Վրաստանի ներկայացուցիչ Թոռնիկե Ղիփիանին դուրս մնաց կիսաեզրափակչից: Նա կատարել է «You» երգը մրցույթի երկրորդ կիսաեզրափակչում: Հայաստանը, արդեն երկրորդ տարին է, չի մասնակցում Եվրատեսիլին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Շան տեսակ՝ Կոկեր - ...: 8.Հավատամք: 9.Անփորձ: 10.Շնչառական օրգանների հիվանդություն: 13.Առավելագույն: 18.Հակառակորդ, թշնամի: 19.Արշիպելագ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում: 22.Ծառերով պատված տարածություն: 23.Սակավարյունություն: 28.Կատարելատիպ: 29.Անզուսպ, կատաղի: 32.Ֆրանսիայի նախկին նախագահ ... Շիրակ: 33.Ստամբուլի հայկական ամսաթերթը: 34.Վրացի եկեղեցական գործիչ, փիլիսոփա, Սուրբ ... Փոքր: 37.Քաղաք Հնդկաստանում: 39.Քաղաք Սիրիայի կենտրոնում: 41.Ափեր չունեցող: 44.Շեն՝ մարդաբնակ վայր: 46.Վրաց շախմատիստուհի, աշխարհի չեմպիոնուհի ... Գափրինդաշվիլի: 47.Հայտնի արաբ փիլիսոփա ... Ռուշդ: 49.Կորիզապտուղ: 50.Ռուսական կայսրության կայսր, Ֆինլանդիայի մեծ իշխան, Լեհաստանի թագավոր ... Առաջին (XVIII-XIXդ): 52.Ռուս փոփ երգչուհի ... Ռասպուտինա: 54.Ամերիկացի շախմատիստ, աշխարհի չեմպիոն Ռոբերտ ...: 55.Վրացի կինոռեժիսոր Ղողոբերիձե: 56.... ու ձախ: 57.Ռազմական թունավոր գազ: 58.Աստծուց թողություն խնդրելու արտահայտություն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ողորկ: 2.Վրացական ֆուտբոլային թիմ: 3.Իբերների աստվածուհի (Իսպանիա): 4.Բանակայինների ֆուտբոլային ակումբը: 5.Իսպանական գինի: 6.Թոփալ (ժող.): 11.Գետ Եվրոպայում: 12.Ամերիկացի բասկետբոլիստ ... Պալասիո: 14.Երկանիվ փոխադրամիջոց: 15.Բջջային հեռախոսներ արտադրող ֆիրմա: 16.Արեւելյան երաժշտական գործիք: 17.Լիրիկական պոեզիայի եւ երաժշտության ժանր: 20.Իր որոշման մեջ հաստատ համոզված: 21.Վրաստանում գործող բանկ: 24.Հաղթանակի դիցուհին հին հունական դիցաբանության մեջ: 25.Երկարության չափման միավոր: 26.Ողջ աշխարհը (ժող.): 27.Ուժը հատած: 30.Վրաստանի Ազգային հերոսուհի ... Մաղաշվիլի: 31.Դարդ, մտածելու առիթ: 35.Սուտասան: 36.Գյուղատնտեսական գործիք՝ հնձած խոտը հավաքելու համար: 37.Կում: 38.«Արարատ»-ի լեգենդար հարձակվող Լեւոն ...: 40.Յոդ (արեւմտ.): 42.Թիֆլիսում ծնված հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-...: 43.Հոգեւորականի վերնազգեստ: 44.Շուկայական հրապարակ հին հունական պոլիսներում: 45.Երկյուղալի: 48.Տեղացի: 51.Վարչական կենտրոն ՌԴ-ում: 52.Մեծ մայր, տատ: 53.Ցող:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Նինվե: 4.Հովհաննես: 8.Բամբակ: 10.Տարտու: 13.Սառա: 14.Թախծոտ: 17.Խմ: 18.Տարի: 19.Որթ: 20.Սեն: 22.Ավազ: 25.Դարչո: 26.Ոստ: 28.Երնակ: 29.Այն: 30.Ելցին: 32.Երկ: 33.Սուդ: 35.Սպի: 36.Սկիհ: 38.Եսայի: 41.Սիս: 42.Լա: 43.Կոն: 44.Վարդ: 45.Նեստան: 47.Դաթա: 48.Բազե: 50.Նյասա: 52.Եվգինե: 53.Թադե: 54.Լայն: 55.Հարց: 56.Կրետե:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Նաբուգոդոնոսոր: 2.Նեմրութ: 3.Երասխ: 5.Ոստայն: 6.Հերթով: 7.Սանտինո: 9.Կամսար: 11.Տա: 12.Ուխտ: 15.Ծանրոց: 16.Որ: 21.Եզնիկ: 23.Վեներա: 24.Ակոս: 25.Դսեղ: 27.Տարիել: 31.Նիհար: 34.Ուդինեզե: 37.Կիկաբիձե: 39.Սավանե: 40.Յուրմալա: 41.Սոնա: 46.Սեւակ: 47.Դաթո: 48.Բայց: 49.Նենե: 51.Սար:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՅՈ ՄՈՆԱՅԱՐՄՈ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ԹԲԻԼԻՍԻ, ՆԱՀԱՐԱՐՈՒԹՅԱՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445